



**Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման
կենտրոն (CARD) հիմնադրամ**
Ազատության պողոտա 1/21-40, Երևան
0037, Հայաստանի Հանրապետություն

✉ card@card.am
🌐 www.card.am
☎ +374 60 44 05 50



ԽԵԼԱՑԻ
Ֆերմա

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ




Հայաստանի անասնաշենքերի մեծ մասը մութ են, ցածր առաստաղներով, խոնավ հատակով, օդի սահմանափակ հոսքով, ինչպես նաև կովերի հարմարավետության համար պահանջվող սանիտարահիգիենիկ պայմանների բացակայությամբ: Այս ամենը պայմանավորված է կենդանիների պատշաճ խնամքի վերաբերյալ գիտելիքների պակասով և անասնաշենքերի բարելավման նպատակով ներդրումների սահմանափակությամբ, ինչը բերում է ցածր կաթնատվության, բացասական է առողջապահում կաթի որակի վրա և կենդանիներին խոցելի է դարձնում հիվանդությունների նկատմամբ, ինչն էլ իջեցնում է անասնապահությունից ստացվող եկամուտները: Անասնաշենքի ներսի միկրոկլիմայի վատ պայմանները բացասական ազդեցություն են թողնում նաև կենդանիների խնամքով զբաղվող անձնակազմի առողջության վրա:



ԽԵՆՈՒՄԻ ՖԵՐՄԱԵՐԸ ԱՊԱՆՈՎՈՒՄ ԵՆ.

- Կենդանիների հարմարավետություն,
- միկրոկլիմայի կառավարում սմարթ համակարգով,
- կթի ճիշտ տեխնոլոգիա,
- առավելագույն մթերատվության դրսևորման հնարավորություն,
- աշխատատար գործընթացների հեշտ կառավարում,
- կթվորի աշխատանքի հեշտացում,
- կենդանիների խնամքով զբաղվող անձնակազմի հիգիենայի և հանգստի պայմաններ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ



Զուտ շահութաբերություն 3 սցենարների համար

Զուտ շահութաբերությունը ցույց է տալիս զուտ եկամտի համամասնությունը ընդհանուր եկամտի մեջ: Ուսումնասիրելով զուտ շահութաբերությունը՝ տեսնում ենք, որ շնայած 1-ին և 2-րդ սցենարների համար տարին բացասական շահույթով է ավարտվում, 5-րդ տարում բիզնեսը միջինում 22% շահութաբեր է դառնում, իսկ 10-րդ տարում հասնում է առավելագույն 32% շահութաբերության: 3-րդ սցենարի դեպքում մասշտաբի էֆեկտով պայմանավորված, սցենարն ավարտվում է դրական շահույթով նույնիսկ 1-ին տարում, երբ շահութաբերությունը կազմում է մոտ 9%: 5-րդ տարում այս բիզնեսը հասնում է մոտ 38% շահութաբերության մակարդակի, իսկ 10-րդ տարում՝ 48%:

Ներդրումների հետզնման ժամկետ

Ներդրումների հետզնման ժամկետը այն ժամանակահատվածն է, որն անհրաժեշտ է ներդրումների ծախսերը վերականգնելու համար: Փոքր և միջին չափի կովանոցի մեջ կատարված ներդրման հետզնմանը տեղի է ունենում գործունեության 6-րդ տարում, իսկ խոշոր կովանոցի դեպքում՝ 4-րդ տարում:

ԽԵՆԱՅԻ ՖԵՐՄԱՆԵՐԻ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ՝ ԿԱԹՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՉԱՄԱՐ



Խելացի ֆերմաներն ապահովում են կովերի հարմարավետությունը, ինչպես նաև ենթադրում են կերակրման և գենետիկական բարելավման (արհեստական սերմնավորում) ճիշտ կառավարում: Այն իրենից ներկայացնում է ինչպես ջերմատան ծածկ, այնպես էլ այլ տիպի շինության ժամանակակից կովանոց, բոլոր այն լուծումներով, որոնք ապահովում են կենդանիների բարձր մթերատվություն և կաթի որակական հատկանիշների բարելավում:



Ջրախմոց (անհատական կամ խմբային տաքացվող)

Ջրի առկայությունը շատ մեծ դեր ունի կաթնաբուսաբուծության գործընթացում. 1 լիտր կաթ արտադրելու համար կենդանուն անհրաժեշտ է առնվազն 3-4 լիտր ջուր: Օրվա մեջ կենդանին ամենաշատը խմում է ջուր՝ անմիջապես կթից հետո ծախված էներգիայի վերականգնման, ինչպես նաև շոգ ժամանակ ջերմային սթրեսից դուրս գալու համար:



Քամիար

Քամիարի առկայությունը կարևոր է տաք եղանակային պայմաններում՝ կովանոցում ջերմաստիճանի նվազեցման, հովացման, ինչպես նաև կենդանիներից արձակված ջերմային էներգիան դուրս մղելու և ընդհանուր օդափոխության իրականացումն արագացնելու համար: Քամիարի կիրառումը նվազեցնում է կաթի միջև 20-30% կորստի ռիսկը, որը կարող է տեղի ունենալ կովանոցում 25°C ջերմաստիճանից բարձր ջերմության պայմաններում:




Ջրային հովացման համակարգ

Կիրառվում է հիմնականում շոգ ժամերին կենդանուն հովացնելու համար: Համակարգն աշխատելով բարձր ճնշման տակ՝ գոլորշիացնում է ջուրը և տարածվում է կենդանիների վրա, ինչը նվազեցնում է կենդանու մարմնի ջերմաստիճանը և թույլ չի տալիս, որ կենդանին ընկնի ջերմային սթրեսի մեջ:





Լուսավորության լամպեր

Օրական 16 ժամ, նվազագույնը 180 Լյուքս կայուն լուսավորությունը նպաստում է կաթնատվության բարձրացմանը: Կայուն լուսավորության արդյունքում կարգավորվում է կենդանու մարտդրությունը և կենդանին սկսում է ավելի շատ կեր ընդունել, ինչը բերում է ավելի բարձր կաթնարտադրության:



ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ



ՓՈՐՈՒ ՖԵՐԱՍ

12 135 քմ.

Տարի	1 սարի	10 սարի
Ըստիկը 1 գոմ (տի հաշվարկով)	81,770 դ	536,781 դ
1 խոտ կտրի ինքնարժեք	21%	159%

ՄԻՋԻՆ ՖԵՐԱՍ

28 306 քմ.

Տարի	1 սարի	10 սարի
Ըստիկը 1 գոմ (տի հաշվարկով)	76,392 դ	499,069 դ
1 խոտ կտրի ինքնարժեք	206%	162%

ՄԵԾ ՖԵՐԱՍ

42 477 քմ.

Տարի	1 սարի	10 սարի
Ըստիկը 1 գոմ (տի հաշվարկով)	162,258 դ	739,725 դ
1 խոտ կտրի ինքնարժեք	182%	117%



Կովերի հանգստի տեղերում նախատեսված ռեզինե մատրասներ

Ապահովում է փափուկ մակերես կովերի հանգստի համար: Այն նվազեցնում է պատկերաց և կանգնելուց առաջացող ցավը, դեպի կործ վարակի ներթափանցման հավանականությունը, ինչպես նաև կենդանիների խորը ցանքարի համար կիրառվող խոտի ծախսը:



Կենդանիների նստեցատեղի բաժանարար

Այն կովի նստեցատեղի հարմարավետության ապահովման օպտիմալ լուծում է: Այս դիզայնը կրճատում է նաև նստեցատեղի մաքրման աշխատանքը:



Կովերի քորիչ

Ինչպես ցանկացած կենդանի օրգանիզմ, այնպես էլ կովը ունի իրեն քորելու, մերսան կարիք, և այս սարքը ապահովում է այդ ամենը: Կենդանուն դա հանելի է և դա նվազեցնում է կովերի սթրեսն ու ավելացնում արտադրողականությունը, ինչպես նաև մինչև 30%-ով կրճատում է մաստիսի առկայությունը:



Կթի սարք

Կթի սարքով կթի իրականացման կարևորությունը կայանում է նրանում, որ մերենայացված կիթը իրականացվում է միաձև, միշտ նույն սակտով՝ վակուումի և մերսանն ճիշտ հարաբերակցությամբ: այնպես, ինչպես հորթն է կաթ ոտում մոր կրծից: Այսպիսով, կովերն ապահովվում են իրենց պոտենցիալ կաթատվության առավելագույն քանակ: Կթի սարքով կթի իրականացման արդյունքում կաթատվությունը կարող է բարձրանալ մինչև 20%:



Կթի սրահ

Կենդանիների կթի իրականացումը նախատեսված կթի հատուկ սրահում ապահովում է մաքուր կաթի ստացումը, ինչպես նաև կթի աշխատանքն ու կրճատում կթի իրականացման համար ծախսվող աշխատաժամանակն ու աշխատույժը:



Պաղեցման տարողություն

Խոշոր կովանոցի դեպքում օրական կաթնարտադրությունը բավականին բարձր է, ուստի հարկավոր է տեղում ապահովել կաթի ստեղծման սառնարանի առկայություն:



Սմարթ համակարգ

Անասնաշենքի միկրոկլիմայի կառավարումն իրականացվում է «ավտոմատ» անասնաշենքում տեղադրված սմարթ տեխնոլոգիաներով: Հեռախոսի միջոցով ցանկացած պահի հասանելի և վերահսկելի են անասնաշենքում ջերմաստիճանի, խոնավության և լույսի տևողության ցուցանիշները:



Արևային ջրատաքացուցիչ կթի հարթակի համար

Վերջինս ապահովում է տաք ջրի կայուն առկայություն՝ կթի սարքի տարաների լվացման գործընթացների իրականացման և կթի սենյակում ընդհանուր հիգիենան ապահովելու համար:



Սեպտիկ հոր

Նախատեսված է կթի սրահի կեղտաջրերի հավաքման և մաքրման համար:

ԾՐԱԳՐԻ ՆԵՐՂՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՆԵՐԸ



Նշված ներքին հագեցվածության տարբերակների կիրառումը, ճիշտ լուսավորության և օդափոխության առկայությունը հանգեցնում են կաթնատվության մոտ 20 %-ի աճի առաջին տարում: Եթե ապահովվեն նաև ճիշտ կերակրման պայմանները, ապա կաթը կաճի ևս 15 %-ով: Այսպիսով, միայն ճիշտ կերակրման և պահվածքի արդյունքում կարող ենք ունենալ մինչև 35 % կաթնատվության աճ: Հավելյալ աճ գրանցելու համար կիրառվում է նաև գենետիկ բարելավում, որի ամբողջական պրոտեկցիայը երևում է 7-10 տարում: